ՏԱՐՈՆ ՎԼԱԴԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆ

https://orcid.org/ **0009-0009-9124-4273**

Ծննդյան տարեթիվ՝ 15.02.1976
Ծննդավայր՝ ՀՀ, քաղաք Ապարան

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ **Տարոն Վլադիկի Հակոբյանը** Ստեփանակերտում միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո 1992թ. ընդունվել է Արցախի պետական համալսարանի, պատմության ֆակուլտետը:

1992 թ. որպես կամավորական մասնակցել է արցախյան ազատամարտին, այնուհետև 1993-1995 թթ. ծառայության է անցել Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության Պաշտպանության բանակում: 2016թ. մասնակցել է ապրիլյան քառօրյա պատերազմին:

1999-2000 թթ. սովորել և ավարտել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչության ճգնաժամային կառավարման պետական ինստիտուտը:

2001 թ. ընդունվել եւ 2005թ. ավարտել է Արցախի պետական համալսարանի պատմության ամբիոնի ասպիրանտուրան:

2008 թ. Հայաստանի Հանրապետության ԳԱԱ պատմության ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական թեզը «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումը և պետական շինարարության գործընթացը, 1991-1994 թթ.» թեմայով՝ ստանալով պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

2021 թ. ստացել է դոցենտի գիտական կոչում:

Տ.Հակոբյանը 1997-1998 թթ աշխատել է Հայաստանի Հանրապետության «Արագածոտնի մարզային էլեկտրական ցանց» պետական ՓԲԸ-ի իրավաբանական բաժնում որպես իրավաբան:

1998-2001 թթ. աշխատել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչությունում:

2001-2005 թթ. աշխատել է Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության արտակարգ իրավիճակների վարչությունում՝ զբաղեցնելով տարբեր սպայական պաշտոններ:

2004-2023 թթ. սեպտենբերի 29-ը համետղությամբ դասավանդել է Արցախի պետական համալսարանում:

2006 թ. հունվարից մինչև նոյեմբեր աշխատել է Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության արտաքին գործերի նախարարությունում որպես նախարարի օգնական: 2007-2008 թթ. աշխատել է համատեղության կարգով «Հեյֆեր» Միջազգային Ծրագիր» կազմակերպության հայկական մասնաճյուղում որպես ծրագրի պատասխանատու:

2006 թ. սեպտեմբերին հիմնել է «Վերածնված հայրենիք» հասարակական կազմակերպությունը, որը իրականացնում է Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության սահմանամերձ գյուղերում սոցիալ-տնտեսական ոլորտի զարգացման ծրագրեր:

2008-2009 թթ. աշխատել է Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության կառավարության առընթեր զբոսաշրջության վարչությունում որպես աշխատակազմի ղեկավար:

2009-2010 թթ. աշխատել է Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության կառավարության առընթեր փրկարար ծառայությունում որպես տնօրենի աշխատակազմի ղեկավար:

2011-2015 թթ. զբաղեցրել է Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության կառավարության առընթեր վերահսկիչ պալատի աշխատակազմի ղեկավարի պաշտոնը:

2016-2017 թթ. զբաղեցրել է Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության վարչապետի խորհրդականի պաշտոնը:

2017-2019 թթ. Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչության խորհրդական:

2019-2023 թթ. հոկտեմբերի 1-ը Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության պետական նախարարի խորհրդական:

2023թ. առ այսօր համատեղությամբ աշխատում է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտում որպես ավագ գիտաշխատողի պաշտոնակատար:

2024 թ. առ այսօր դասավանդում է Հայաստանի Հանրապետության ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայում, զբաղեցնելով նաև ՀԱ ամբիոնի պատմության ցիկլի պետի պաշտոնը:

Տ.Հակոբյանի գիտական հետաքրքրությունների շրջանակում են Արցախի նորագույն ժամանակաշրջանի պատմության տարաբնույթ հիմնախնդիրները՝ Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության պետական շինարարության, հասարակական և քաղաքական կյանքի պատմությունը:

Տ.Հակոբյանը հեղինակ է ուսումնամեթոդական ձեռնարկի և մենագրության, ինչպես նաև 20 ավել գիտական հոդվածների, որից՝ 2 ընդգրկված են Scopus/Webofscience (Q 1, 2024-2025) ՄԳՇ-ում:

Արցախյան ազատամարտին մասնակցելու համար Արցախի նախագահի 2006թ. թիվ 39 հրամանագրով պարգեւատրվել է «Արիության համար» մեդալով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 1996թ դեկտեմբերի 20-ի թիվ 586 հրամանի «1992-1994թթ. մարտական գործողությունների մասնակից» կրծքանշանով:

Անկուսակցական է:

Ամուսնացած է, ունի երեք երեխա: